Ց Ա Ն Կ
ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները	Գերակա խնդիրների լուծմանն ուղղված քայլեր
1	2	3
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Բնակարանային ապահովում՝ Ռուսաստանի Դաշնության միջոցների հաշվին աղետի գոտու բնակավայրերում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման միջոցով	Աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով կառուցվող բնակարանների (բնակելի տների) հատկացման գործընթացի իրականացում՝ մասնավորապես. - ՀՀ կառավարության 10.06.1999թ. N432 և 13.11.2008 N1337-Ն որոշումների դրույթների համաձայն պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) ստանալու համար համապատասխան համայքների ղեկավարների կողմից հաստատված ցուցակներում ընդգրկված քաղաքացիների փաստաթղթային փաթեթների ուսումնասիրություն. - ուսումնասիրության արդյուքներով բնակարան (բնակելի տուն) ստանալու հավակնող անձանց ցուցակների հաստատում.

		- բնակարանների (բնակելի տների) բաշխում. - բնակարանների (բնակելի տների) նվիրատվության պայմանագրերի կնքում:
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Քաղաքաշինության գործունեության հատուկ կարգավորման բնագավառի օրենսդրության կատարելագործում և ՀՀ բնակավայրերում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորում	· Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորմանն ուղղված ենթաօրենսդրական ակտերի մշակում և կատարելագործում. · ՀՀ բնակավայրերում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքների առանձնացում. · քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման առանձին տարածքներում կառուցապատման չափորոշիչների մշակում. · տարածքների զարգացմանը նպատակաուղղված առանձին ներդրումային ծրագրերի մշակում:

ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Հայաստանի Հանրապետությունում տարածական պլանավորման համակարգի բարեփոխում, քաղաքաշինության ոլորտում համայնքների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում	· Տարածական պլանավորման /քաղաքաշինական ծրագրային/ փաստաթղթերի մշակման և հաստատման իրավական հիմքերի արդիականացում, կարգավորման ենթակա խնդիրների բացահայտում, նոր ընթացակարգերի մշակում. · ՀՀ համայնքների ղեկավարների պատվիրատվությամբ պարտադիր մշակման ենթակա ծրագրային փաստաթղթերի ՝ գլխավոր /այդ թվում պարզեցված/ հատակագծերի մշակման աշխատանքների համակարգում. · ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որ. ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպում. · Համայնքների բնակչությանը ծրագրային փաստաթղթերի նախագծերի մշակման գործընթացին իրազեկելուն և համատեղ քննարկումներին մասնակցություն:
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ՀՀ տարածքում ինքնակամ շինարարության դեմ պայքարի հիմնախնդիրների լուծման միջոցառումների իրագործում	- Քաղաքաշինության ոլորտում պետական վերահսկողություն և հսկողություն իրականացնող պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների ու պարտականությունների հստակեցում.

		· Ինքնակամ շինարարություն իրականացնողների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցների խստացում. · Ինքնակամ շինարարության հետևանքների վերացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններում համապատասխան ստորաբաժանումների ստեղծման ուղղված միջոցառումների իրականացում. · Ինքնակամ շինարարության օրինականացման գործընթացը կարգավորող իրավական ակտերի գործողության ժամկետի սահմանափակում:
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխա-նիզմների կանոնակարգում	· ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 15-ի ,,Հայաստանի Հանրապետության համայնքներում /բնակավայրերում/ անհատական բնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգի ներդրման ու կիրառման կարգը հաստատելու մասին,, թիվ 440-Ն որոշմամբ հաստատված կարգի ներդրում՝ այդ թվում քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների կիրառման և ընթացակարգերի օպտիմալացման միջոցով,

		· ՀՀ համայնքներում քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների ներդրման հնարավորությունների գնահատում, խնդիրների բացահայտում և դասակարգում, · Քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխա-նիզմների ներդրմանն ուղղված դրույթների ներառմամբ գործող իրավական նորմատիվ ակտերի կատարելագործում:

ՀՀ քաղաքաշինության նախարար՝ Վ. Վարդանյան